

## ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մաքսալին սակագների օրինագծի ընդունուելը ռավխառութում.—Ֆրանսիական պարլամենտի վերջին նիստը.—Էմբերների ձերբակալուիլը.—Վենեցուէլայի դործերը.—Նորուպական դիպլօմատիան ե՞րբ է խփառ միջոցների դիմում.—Սուլթանի վերջին ծաղըը.—Անդամահատութեան գրկարար նշանակութիւնը.—Ինչ է թելաղբում պատմութիւնը Մակեդոնիային.—Կոմս Լամբորգի ուղևորութիւնը Վիէննա:

„Պրա. Ենտե՛.՝ յօդուածը մակեդոնական գործերի մասին»

Ռայխստագում փոքրամասնութեան և մեծամասնութեան պայքարը, որի մասին անցեալ անգամ գրել էինք, վերջացաւ, ինչպէս դժուար չէր նախատեսել, չքաւոր մասսայի շահերի պաշտպանների պարտութեամբ. ազահ ազրարներին աջողուեց ընդունել տալ մաքսային սակագների օրինագիծը 202 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 100-ի. Այդ յաղթութիւնից յետոյ ազրարները այժմ կարող են վերադառնալ իրանց ընդարձակ կալուածները և Զրօրհնեաց արձակուրդներին ճոխ քէֆեր սարքել ի հաշիւ ապագայում՝ մասսայի հացի փողից կտրած կոպէկների:

Պակաս աղմկալի չէր նաև ֆրանսիական պարլամենտի վերջին նիստը. Փրանսիական հականանրապետականները ամեն կերպ աշխատում են սեւացնել այժմեան արմատական կառավարութիւնը ժողովրդի աշխուել: Օգոստելով էմբերների մութ գործից, Դէրուէդի բարեկամ Գօթիէ դը կանյին և ուրիշ նացիօնալիսաններ՝ մի շարք մեղադրանքներ և զրպարտութիւններ թափեցին ներկայ կառավարութեան, մանաւանդ արդարադատութեան մինիստը Վալէի հասցէին, իբրև թէ դա մեղսակից է այն բանում, որ այդ մեծ խարդախների ընտանիքը կարողացաւ խուսափել արդարադատութեան ձեռքից: Այդ նացիօնալիսանները իբրեւ թէ չը գիտեն, որ նոյն ֆրանսիայում, ոչ հանրապետական ուժիմների ժամանակ, շատ աւելի խայտառակ

գործեր են պատահել. և եթէ ներկայ հասարակական պայման-ներում մի ռեժիմ կայ, որի օրգ աւելի մնձ հնարաւորութիւն է արւում երեւան հանելու այս աշխարհի ուժեղների<sup>4</sup> ստոր ա-ըարքները այդ, յամենայն դեպս, նացիօնալիստների ցանկացած ռեժիմը չէ, այլ աւելի շուտ արմատական հանրապետականների կառավարութիւնը:

Այսպէս թէ այսպէս նացիօնալիստների յարձակումնե-րը առիթ տուին Վալեին պարզելու, որ մնձ խարութիւ-ների ընտանիքի գլուխը, Ֆրեդերիկ Էմբերը, իբրև պատ-գամաւոր, պատկանում էր բուլանժիստների կուսակցութեան և, ուրեմն, մօտ էր նացիօնալիստների սրտին. Այդ խօսքերը կատաղութեան հասցրին պահպանողականներին. սոսկալի իրա-բանցում և աղուկ բարձրացաւ ժողովում. „Սուտ է“, „կեղասոտ միջոցների է դիմում մինիստրը“ և այլ անվայել նախատինքնե-րով փորձեցին կատաղած նացիօնալիստները փաթաթել Էմբերնե-րի անպատիթ մնացած արարքները, ներկայ կառավարութեան շնչին: Իրարանցումը այն տեղը հասաւ, որ ժողովինախագահ Լէօն Բուրժուան ստիպուած եղաւ մի առժամանակ ընդհատել նիստը և, կրկին բանալով, առաջարկել, որ ժամանակաւորապէս հե-ռացնուեն ժողովից նացիօնալիստ պատգամաւորներից երկուոր, որոնք թոյլ էին տուել իրանց անվայել խօսքերով և վիրաւո-րական ախնարկներով չօշափել մինիստրի պատիւը: Բայց և այսպէս, Էմբերների գործը բնաւ չը պարզուեց այդ աղմուկ-ներից յետոյ էր Հեռագիրները վերջերումս հաղորդեցին, որ Մարդում աջողուել է ձերբակալել Էմբերներին: Ուրեմն, շատովի արդարադատութեան առաջ կը մերկացնուեն երկար տարիների ընթացքում իրանց փայլուն և շքեղ սալօններում յարգուած, քարեգործ և քարեպաշտ պարոնների և տիկինների գերեր կատարող այդ խարդախ ընտանիքի բոլոր անդամները: Սակայն ովկ կարող է ասել, որ ներկայ հասարակական կարգե-րում այդ մի եղակի երեւոյթ է և ոչ ընդհանրապէս կղերական-բուրժուական կենցաղը որոշող մի խոչըր երեւոյթ:

Միթէ բնորոշ չէ նոյն հասարակական կարգերի համար նաև այն, ինչ կատարում է տխուր հոչակ ունեցող մնանկութեան հետ կապուած Պանամայի մօտերքում, Վենեցուէլայի մէջ: Երկու հզօր պետութիւններ միացած ոյժերով յարձակուել են Հարա-ւային Ամերիկայի մի փոքրիկ հանրապետութեան վրայ, ովկիա-նասի ալիքների մէջ են խեղդում նրա նաւերը, պաշարում են այդ հանրապետութեան նաւահանգիստները, մի խօսքով՝ տեղտօնա-կան անզթութեամբ զրահաւորուած բառնցք են ցոյց տալիս մի փոքրիկ ժողովրդի, որովհետեւ մի քանի անգլիացի և գեր-

մանաշի վաշխառու կապիտալիստների շահեր վտանգուած են. Սակայ միթէ չէր կարելի այդ առեւտրական հաշիւների գործը յանձնել միջազգային միջնորդ դատարանի քննութեան, կը մոտածի միամիտ ոչդիմումատը, որ չը դիտէ թէ ռոյժը՝ իրաւունք է» և եւրոպական մեծ, հզօր պետութիւնները դիտեն այդ սկզբունքը գործադրել իրանց օգտին և հեշտութեամբ չեն դիմում միջնորդ դատարանի քննութեան:

Այստեղ կարիք ենք գգում մի քանի տեղեկութիւններ առաջ բերել, որ աւելի հասկանալի լինեն հեռաւոր Վենեցուէլյայում կատարուող դէպքերը:

Յայտնի է որ Կոլումբոսից յետոյ դէպի Նոր Աշխարհը կամ Ամերիկան սկսուեց Հին Աշխարհից գաղթային հոսանք, որ դարուց դար ընդարձակւում էր: Անգլօ-գերմանական ցեղերը սովորաբար գաղթում էին դէպի Հիւսիսային Ամերիկա, իսկ ոօմանական ցեղերը, զիսաւորապէս սպանացինները, դէպի Կեդրունական և Հարաւային Ամերիկան: Նոր հայրենիքի փարթամբնութեան մէջ այդ ոօմանական ազդերը աւելի ևս մեղկացան, իսկ իրանց հին հայրենիքի միապետական ռեժիմը և կաթօլիկ կղերի ազգեցութիւնը արդէն որոշ զրոյմ էին զրել զրանց աշխարհայեցողութեան վրայ, որ այնքան էլ նպաստաւոր չէր հասարակական կարգերի կանոնաւոր առաջադիմութեան համար:

Նոր հայրենիքում սպանացինները դատան բազմաթիւ վայրենի և կիսավայրենի կարմրամորթ ցեղեր. ապա Աֆրիկայից բերուեցան ստրուկ նեղըներ: Խառն ամուսնութիւնները այդ բոլոր ցեղերի մէջ առաջ բերեց նոր տեսակի մարդիկ ևս: Արդ, դժուար չէ, ի նկատի ունենալով ժառանգական օրէնքը և այդ ցեղերի մտաւոր զարգացման ընդհանուր մակերեսոյթը, հասկանալի է, որ բարձր կուլտուրական պահանջներն ու հասարակական կարգերը այնքան էլ հեշտ չէին կարող պատուաստուել այդ նոր ոօմանական երկրներում:

Անցեալ դարի սկզբներում ազատուելով Սպանիայից Կենտրոնական և Հարաւային Ամերիկայի գաղութները բաժանուեցան բազմաթիւ տէրութիւնների, բոլորն էլ հանրապետական կառավարութիւններով, պետական սպանական լեզուով և կաթօմիկ կրօնքով: Այդ հանրապետութիւնները չը կարողացան այնպիսի հաստատ հիմքերի վրայ դնել իրանց հասարակական կարգերը, ինչպէս այդ արին անզօսակաները Հիւսիսային Ամերիկայում: Եւ այդ հասկանալի է. բողոքական, սահմանադրական Անգլիայից գաղթող տարրերը իրանց մտաւոր զարգացմամբ և բնաւորութեան տոկունութեամբ սպանացիններից աւելի բարձր էին, այնքան էլ չէին խառնուած սեամորթների և կարմրամոր-

թերի հետ, միւս կողմից էլ իրանց նոր հայրենիքը չունէր բնութեան փարթամութիւն և պահանջում էր մարդկանցից եռանդ, աշխատասիրութիւն, չէր մեղկացնում դրանց այնպէս, ինչպէս տրօպիկական բնութիւնը ուժանական ազգերին:

Այդպէս ահա տարրեր են Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի ազգերի բնաւութիւնները:

Չը նայած լայն ընտրողական սկզբունքին, որ հիմք է դրուած այդ աշխարհի նաև ուժանական հանրապետութիւնների հաստատութիւններում և կարգերում, այնուամենայնիւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներից տարրեր կերպով են ըսթանում Հարաւային Ամերիկայի այդ տարրեր տարրեր «Միացեալ Նահանգների» ներքին դորձերը:

Կուսակցութիւնների պայքարը խաղաղ սահմանադրական ճանապարհով չէ ընթանում այդ ուժանական հանրապետութիւնների մէջ, այլ բուռն երկպառակութիւնների, զինուած ապստամբութիւնների պատճառ է լինում: Պարտուած կուսակցութիւնը պատերազմ է մղում իշխող կուսակցութեան դէմ զէնքը ձեռին, եղբայրասպան կոփէններում: Այդպիսի ներքին կոփէններ միշտ լինում են Ամերիկայի ուժանական հանրապետութիւնների մէջ: Այդպիսի կոփէններ տեղի ունէին և այս երկու վերջին տարիներս կօլումբիայի և Վենեցուէլայի մէջ: Այդ երկու հանրապետութիւնները, որոնք մի ժամանակ մի ամբողջութիւն էին կազմում, այժմ իրարից անջատուած, առանձին տէրութիւններ են, իրար հետ կուռում են, հաշտուած, նորից կուռում և այլն: Այդ հանրապետութիւններից ամեն մէկում կան կուսակցութիւններ, ինչպէս աշխարհիս ամեն մի ծայրում, ուր ապրում են մարդիկ: Կօլումբիայում կառավարչական զեկը անցել էր կղերական-բուրժուական կուսակցութեան ձեռքը: և ահա գեմօկրատները ապստամբուել էին, սկսուել էր ներքին պատերազմ Վենեցուէլայում կառավարչական զեկը անցել է գեմօկրատների ձեռքը և պարտուած կղերական-բուրժուական կուսակցութիւնն է ապստամբում և իր զօրքով կանոնաւոր պատերազմներ մղում իշխանութեան դէմ:

Բայց, տեղացիներից բացի այդ երկրներում ապրում են նաև եկուոր վաճառականներ, գլխաւորապէս գերմանացիք, անգլիացիք, եանկիններ, նաև իտալացի, ֆրանսիացի և այլն, կղերը չը նմանուելով իր Մեծ Ուսուցչն, ամեն սեղ, սովորաբար, բարեկամ է խոշոր դրամատէրերին: այս վերջիններն էլ չափազանց սիրում են իրանց սեւազդեստ այդ հաճոյակատարներին: Իւրաքանչիւր երկրում կան բազմաթիւ իտոչոր և շահա-

ւէտ ձեռնարկութիւններ, որնցից, եթէ ինքը կառավարութիւննը չի կարողանում օգտուել, օգտուեմ են կապիտալիստները։ Հենց, օրինակի համար, երկաթուղինները։ Այդպիսի ձեռնարկութիւններ դժուարութեամբ են անցնում կապիտալիստների ձեռքը, երբ երկրի զեկը դժուար է գեմոկրատ վարիչների մօաքանականաբար, օտարերկրացի կապիտալիստները այնքան էլ չեն կարող համակրել գեմոկրատ ուժիմները։ Այդ երեւաց նաև Կոլումբիայի և Վենեցուէլայի ներքին երկպառակութիւնների ժամանակ։

Օտարերկրացի կապիտալիստները այնքան վրգովուած էին, որ Վենեցուէլայում կառավարչական զեկը անցաւ գեմոկրատ կուսակցութեան ձեռքը, որ նոյն իսկ բացարձակ ըմբոստութեան օրինակներ էին յոյց տալիս։ Այդպէս, անցեալ տարի, Վենեցուէլայի երկաթուղինների (որ գերմանական մի ընկերութեան սեփականութիւն է) գերմանացի դիրեկտօրը մերժեց փոխագրել կառավարչական զօրքերը, և հանրապետութեան նախագահ Կաստրօն ստիպուած էր ժամանակաւորապէս գրաւել այդ երկաթուղինները և հեռացնել երկրից այդ գերմանացուն, որ իր ըմբոստութեամբ ուզում էր եկրի կղերական կառավարութեան զօրքերին կռուի մէջ մի առաւելութիւն տալ:

Ահա որքան երես առած են լինում մեծ պետութիւնների կապիտալիստ հպատակները օտար, թոյլ երկրներում։

Երբ Վենեցուէլայում կառավարական զեկը անցաւ գեմոկրատների ձեռքը—այդ երկրում հաստատուած անզիփացի և գերմանացի կապիտալիստները իրանց շահերը վտանգուած տեսան, վախեցան՝ որ իրանց վաշխառութեան ցանցերի մէջ ընկած տէրութիւնը փորձի թօթափել իրանից այդ սարդերի ոստայնը։ Եւ նրանք վայնասուն բարձրացրին, իսկոյն օգնութեան հասան զրահաւորուած ու կրուպափ թնդանօթներով զինուած նաւերը։ Անզիփայի և Գերմանիայի օրինակից խրախուսուեց և իտալիան, որ նմանապես ներկայացրեց իր վաճառական դափնարները<sup>1</sup>, ուր զրուած էին Վենեցուէլայի պարագերը շէլլօկեան բարդ տոկոսներով հանդերձ։

Լաւ «գեշէֆտ» էր բացւում և եանկի կապիտալիստների համար, ուստի առայժմ ըուզվիւաը ծալեց և մի կողմ դրեց Մօնրօէի հռչակաւոր դօկտրինը, որով արգելում է ոչ-ամերիկական պիտութիւններին խառնուել ամերիկական ներքին գործեր ւա։ Մի խօսքով, դարուս շահագիտական, մերկանտիլ ոգին ցուր տուեց իր նողկալի կողմերը և այդ գործում, ինչպէս անցեալ տարի ֆրանս-թրքական ընդհարման դէպուամ, երբ երկու ֆրանսիահպատակ վաշխառուների գատը պաշտպանելու համար

թրքական ջրերը ուղարկուեց մեծ հանրապետութեան նաւատորմիզը:

Նոյն Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան և Իտալիան մոռանում են իրանց զրահակիր և թնդանօթներով զինուած նաւերի մասին, երբ պէտք է զուտ մարդասիրական մի դատ պաշտպանել, մոռանում են զինուած բռունքի դիմել, երբ պէտք է կատարել տան նոյն իսկ իրանց սեփական այնպիսի պատուէրները, որոնցից իրանք դրամական չահ չունեն, բայց ուրիշների լինել չը լինեն է կախուած: Միթէ Բերլինի վեհաժողովում դրանց ասորագրութիւններով չէին որոշուած Մակեդոնիայի բեֆորմները:

Եւ ինչ, Թիւրքիան ոչ միայն չը կատարեց այդ պատուէրները, այլ և մեծ պետութիւնների քթի տակ շարունակում է սըրով և հրով ոխաղաղացնել՝ բողոքող ազգերին իսկ երբ և ւրոպական դիպլոմատիան կիսարերան, փաղաքօրէն խնդրում է սուլթանին, որ նա մի բան անի այդ թշուառ բայեաի համար, Խլըզ-Քեսուկի ճարպիկ կալանաւորը նուրբ կերպով հեղնում է Եւրոպային, առաջարկելով այնպիսի բեֆորմներ, որոնք Բերլինի վեհաժողովում պահանջաներից ել պակաս են և անզօր են մազի չափ փոփոխելու քրիստոնեաների անտանելի կացութիւնը:

Լրագրներում տպուած էին Մակեդոնիայում մաշնուելիք այդ սուլթանական բեֆորմները: Դա մեֆիստօֆէլեան ծաղր է. երեւակայեցէք—իւրաքանչիւր վիլայէթի ընդհանուր կօմիս արք, որ պէտք է վերահան և կի վավլինների գործունէութեան վրա՝ պէտք է հաստատուի իր պաշտօնի մէջ նոյն վալիններից... Եւ կայ մէկը եւրոպական դիպլոմատներից, որ հաւատայ այդ „բեֆորմների“ լրջութեան: Ի հարկէ—ոչ: Անշուշտ, շատ աւելի մեծ նրբամութիւն կը ցոյց տային այդ դիպլոմատները, եթէ ինդիրը վերաբերուէր ոչ իսեղ ու կրակ բայցին, այլ եւրոպայի փայլուն կապիտալիստներին:

Եւ դեռ հարց է թէ՝ որքան ցանկալի է եւրոպական խոչոր բուրժուազիայի տեսակէտից, որ իսկապէս Թիւրքիան վերածնուէր, ընդունակ դառնար ինքը իր բնիկ ժողովրդների միջոցով վարել սեփական գործերը, անտեսութիւնը, մշակել իր բնական հարստութիւնները, շինուլ իր միջոցներով երկաթուղիներ և այլն: Զէ որ այն ժամանակ դրսի պարագիտների համար նպաստառ հող չէր ներկայացնի Թիւրքիսն, որ այդ հիմնական բեֆորմներից կը դառնար կենսունակ, ուժեղ և իր բազմալիզու ու բազմակրծ ժողովրդների բարօրութեամբ անընկճելի: Հէնց իրերի դրութեան ամրող արագիզմը կայանում է նրա-

նում, որ Թիւրքիան չի հասկանում իր իսկական շահերը, այլապէս նա ինքը կ'աշխատէր մտղնել վարչական այն բարենորդութիւնները, որ թելադրում են նրան իր քրիստոնեայ հրպատակները. դրանք մտաւորապէս աւելի զարդացած լինելով՝ հասկանում են վտանգը և, յոյսները կտրելով Թիւրքիաի վերածնութեան հնարաւորութիւնից, գերազասում են անշարժ, վտող, նեխուած ոեփիմից վաղօրօք անջատուել և դրանով ազատել իրանց գոյութիւնը կորստից, որովհետեւ մնալով կապուած մեռնող օրդանիզմի հետ, իրանք ևս պէտք է վտեն, մեռնեն:

Եւ Թիւրքիայի ամրող պատմութիւնը ապացուցեց, որ կենսունակ տարրերի անջատումը մի անհրաժեշտութիւն է. ինչ կը լինէր Բուլղարիայի, Սերբիայի, Ռումանիայի, Յունաստանի, Կրետէի, Բօսնո-Հերցոգովինայի, Զերնոգորիայի դրութիւնը, եթէ ժամանակին չը գործադրուէր, գլխաւորապէս Ռուսաստանի չնորհիւ, անհրաժեշտ անդամահատութիւնը ապականող մարմնից Պարզ է, որ Մակեդոնիային ևս մնում է նոյն միջոցին դիմելու:

Ինչպէս յայտնի է հեռագրներից ոռւսաց արտանքին գործոց մինիստր կոմս Լամզդորֆ պէտք է անցնի Սօֆիայով և Բէլգրադով և այցելի Վէննա: Անկասկած, Աւստրօ-Ռւնգարիայի և Ռուսաստանի արտաքին գործոց մինիստրների տեսակցութիւնը մեծ քաղաքական նշանակութիւն ունի Բալկանիան թերակղզու մօտաւոր ապագայի համար: 1897. Ռուսականին կայացած Աւրատրօ-ռուսական համաձայնութեան նպատակն էր պահպանել Տառն գօշ-ն Բալկանեան թերակղզու վրայ. սակայն յաճախ քաղաքագէտները անկախ իրանցից անզօր են լինում իրանց ցանկացած դրութիւնը պահպանել անփոփոխ: Այս ճանապարհորդութիւնը միջոց կը տայ Ռուսաց Կայսեր ներկայացուցչին տեղն ու տեղը ծանօթանալ ժողովրդի արամադրութեան հետ թէ Բուլղարիայում և թէ Սերբիայում, լսել մակեդոնացիների արդար բողոքները և Վիէննայում ծրագրել երկու պետութիւնների անելիքը, եթէ գարնան յակարծակի բարդութիւններ ծագեն Մակեդոնիայի պատճառով: Հեռադրական տեղեկութիւններից երեսում է որ մեծ ոգեհրութեամբ են սպասում կոմս Լամզդորֆի գալուսեան Բալկանեան սլաւօնները:

Լ. Ա.